ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1451-Ա « 18 » ապրիլի 2024թ.

ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 27-ի հ. 518-Ա որոշման պահանջները.

1. Հանձնարարել.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը՝ կազմակերպել և ապահովել սույն որոշման հավելվածի ժամանակացույցին համապատասխան հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթների անցկացումը և հաստատված ժամանակացույցի համաձայն մրցույթներն անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը՝ http://www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև ապահովել մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիներից դիմումների և դիմումին կից ներկայացվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը և մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված հավելվածի ժամանակացույցին համապատասխան հայտարարության հրապարակումը Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (www.yerevan.am):

2. Ընդունել ի գիտություն, որ մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոց, հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման հ.1 դահլիճում և մրցույթներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց փաստաթղթերն ընդունվելու են Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոցի հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի հ.212 սենյակում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը:

4.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
2024թ. ապրիլի 18-ի
հ. 1451-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

հ/հ	Փակ բաժնետիրական ընկերության անվանումը	Մրցույթն անցկացնելու օրը և ժամը
1.	«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	21.05.2024թ. ժամը՝ 11.00
2.	Երևանի «Կարմիր Բլուր» առողջության կենտրոն ՓԲԸ	21.05.2024թ. ժամը՝ 11.00
3.	Երևանի «Քանաքեռ-Զեյթուն» առողջության կենտրոն ՓԲԸ	21.05.2024թ. ժամը՝ 11.00
4.	Երևանի «Նոր Նորք» առողջության կենտրոն ՓԲԸ	21.05.2024թ. ժամը՝ 11.00

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**